ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության
հակակոռուպցիոն դատարան,
նախագահող դատավոր՝ Տ.Դավթյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան,
նախագահող դատավոր՝ Ա.Նահապետյան

2024 թվականի նոյեմբերի 28-ին քաղաք Երևանում

ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆԻ
Ս.ՉԻՉՈՅԱՆԻ
Դ.ՎԵՔԻԼՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով թիվ ՀԿԴ/0044/15/24 դատական վարույթով ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2024 թվականի մայիսի 10-ի որոշման դեմ [redacted] ներկայացուցիչ [redacted] վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2024 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ սեփականության իրավունքի սահմանափակումը վերացնելու վերաբերյալ [redacted] ներկայացուցիչ [redacted] կողմից ներկայացված միջնորդության կապակցությամբ վարույթի հարուցումը մերժվել է:

2. Առաջին ատյանի դատարանի հիշյալ որոշման դեմ [redacted] ներկայացուցիչ [redacted] կողմից բերված հատուկ վերանայման բողոքը Վերաքննիչ դատարանի 2024 թվականի մայիսի 10-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

3. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ [redacted] ներկայացուցիչ [redacted] բերել է հատուկ վերանայման բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2024 թվականի հունիսի 24-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

4. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է վարույթի ելքի վրա:

4.1. Մասնավորապես, բողոք բերած անձը գտել է, որ գույքի վրա դրված արգելանքը վերացնելու վերաբերյալ միջնորդության հիման վրա վարույթ հարուցելը մերժելու մասին որոշումը ենթակա է հատուկ վերանայման՝ փաստարկելով, որ նույնանման փաստական հանգամանքներով այլ գործերով Հայաստանի Հանրապետության դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերում տվյալ իրավական հարցին տրվել են այլ մեկնաբանություններ, մասնավորապես՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանը, թիվ ՀԿԴ/0044/15/23 և ՀԿԴ/0045/15/23 վարույթներով արգելադրված գույքերի սեփականատերերի միջնորդությունների կապակցությամբ 2023 թվականի մարտի 20-ին որոշումներ է կայացրել «Վարույթ հարուցելը մերժելու մասին», նշված որոշումների դեմ ներկայացված բողոքները Վերաքննիչ դատարանը ոչ միայն ընդունել է վարույթ, այլ նաև բավարարել է դրանք և բեկանել Առաջին ատյանի դատարանի 2023 թվականի մարտի 20-ի թիվ ՀԿԴ/0044/15/23 և ՀԿԴ/0045/15/23 որոշումները: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը թիվ ՀԿԴ/0044/15/23 և ՀԿԴ/0045/15/23 վարույթներով օրինական ուժի մեջ մտած որոշումներով գտել է, որ գույքի վրա դրված արգելանքը վերացնելու վերաբերյալ միջնորդության հիման վրա վարույթ հարուցելը մերժելու մասին ստորադաս դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման, քանի որ

հակառակ դեպքում կստացվի մի իրավիճակ, երբ արգելադրված գույքի սեփականատերը զրկված կլինի դատական պաշտպանության և արդարադատության մատչելիության իր իրավունքից:

4.2. Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, նույն՝ թիվ 61208819 քրեական վարույթի շրջանակներում (դատական վարույթ՝ ՀԿԴ/0117/15/23) քննության առնելով Առաջին ատյանի դատարանի 2023 թվականի սեպտեմբերի 19-ի որոշման դեմ ներկայացրած բողոքը, 2023 թվականի նոյեմբերի 23-ի կայացված որոշմամբ արձանագրել է, որ գույքի արգելադրումը վերացնելու մասին միջնորդության կապակցությամբ վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումը բողոքարկելու իրավահարաբերությունը նախ՝ սահմանված է օրենքով, բացի այդ, այն պետք է ենթարկվի ավելի լայն մեկնաբանման, որի պայմաններում գույքի վրա դրված արգելանքը վերացնելու վերաբերյալ վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումը ենթակա է հատուկ վերանայման: Հակառակ դեպքում կստացվի մի իրավիճակ, երբ արգելադրված գույքի սեփականատերը զրկված կլինի դատական պաշտպանության և արդարադատության մատչելիության իր իրավունքից, այնքանով, որքանով չի կարող բողոքարկել նախաքննական մարմնի այնպիսի որոշում, որն անհամաչափորեն խախտում կամ սահմանափակում է իր՝ որպես սեփականատիրոջ իրավունքները:

5. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2024 թվականի մայիսի 10-ի որոշումը և կայացնել դրան փոխարինող դատական ակտ՝ վարույթը փոխանցելով ստորադաս դատարան՝ նոր քննության:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Վարույթի հարուցումը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «*(...) [Դ]ատարանը գտնում է, որ միջնորդության կապակցությամբ վարույթի հարուցումը ենթակա է մերժման, քանի որ ներկայացված միջնորդությունը չի պարունակում գույքի արգելադրման իրավաչափությունը վիճարկող նոր էական փաստարկներ (...)*»[1]:

7. Հատուկ վերանայման բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(...) Վերաքննիչ դատարանը, ուսումնասիրելով Առաջին ատյանի դատարանի 2024 թվականի ապրիլի 08-ի որոշման դեմ* [redacted] *ներկայացուցիչ* [redacted] *կողմից ներկայացված հատուկ վերանայման բողոքը, անհրաժեշտ է գտնում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե արդյոք գույքի վրա դրված արգելանքը վերացնելու վերաբերյալ միջնորդության հիման վրա վարույթ հարուցելը մերժելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման Վերաքննիչ դատարան:*

---

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 97-99:

Այսպես.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 12-րդ կետերում նշված են առաջին ատյանի դատարանի այն դատական ակտերը, որոնք Վերաքննիչ դատարանում ենթակա են հատուկ վերանայման, իսկ 13-րդ կետը հնարավորություն է տալիս Վերաքննիչ դատարան հատուկ վերանայման կարգով բողոք ներկայացնել նաև առաջին ատյանի դատարանի այլ դատական ակտերի դեմ՝ պայմանով, որ կոնկրետ այդ ակտը հատուկ վերանայման կառուցակարգով բողոքարկելու հնարավորությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով պետք է հստակ նախատեսված լինի:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ գույքի վրա դրված արգելանքը վերացնելու վերաբերյալ միջնորդության հիման վրա վարույթ հարուցելը մերժելու մասին որոշումը ներառված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 12-րդ կետերում: Ավելին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որևէ այլ հոդվածով հիշյալ որոշումը հատուկ վերանայման կարգով բողոքարկելու հնարավորություն նախատեսված չէ, ուստի այդ դատական ակտը ենթակա չէ բողոքարկման նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի շրջանակներում:

Ստացված նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վերաքննիչ դատարան է բողոքարկվել [redacted] ներկայացուցիչ [redacted]՝ գույքի արգելադրումը վերացնելու մասին միջնորդությամբ վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումը, մինչդեռ վերջինը, հաշվի առնելով վերը կատարված իրավական վերլուծությունը, ներառված չէ Վերաքննիչ դատարանի կողմից հատուկ վերանայման ենթակա դատական ակտերի շրջանակում, հետևաբար՝ բողոքարկման ենթակա դատական ակտ չէ:

Ընդ որում, վերաքննիչ բողոքը կրում է «Հատուկ վերանայման բողոք» վերտառությունը, ինչից ենթադրելի է, որ բողոքաբերը ստորադաս դատարանի քննարկվող որոշումը դիտարկել է Վերաքննիչ դատարանի կողմից հատուկ վերանայման ենթակա դատական ակտերի շրջանակում: Մինչդեռ, ներկայացված բողոքն անգամ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա լինելու տեսանկյունից քննարկելու դեպքում Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն է, որ վերոնշյալ դատական ակտը վերաքննության կարգով ևս ենթակա չէ բողոքարկման, քանի որ Առաջին ատյանի դատարանի վիճարկվող որոշումը ներառված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 352-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերի ցանկում:

Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանի կողմից կայացված գույքի վրա դրված արգելանքը վերացնելու վերաբերյալ միջնորդության հիման վրա վարույթ հարուցելը մերժելու մասին ստորադաս դատարանի որոշումը ենթակա չէ բողոքարկման ո՛չ հատուկ վերանայման, ո՛չ վերաքննության կառուցակարգերով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 391-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է. «Հատուկ վերանայման բողոքը թողնվում է առանց քննության, եթե (...) 4) բողոքը բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման (...)»:

Հաշվի առնելով վերը ներկայացված վերլուծությունը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 08-ի՝ «Վարույթ հարուցելը մերժելու մասին» որոշման դեմ [redacted] *ներկայացուցիչ* [redacted] *կողմից ներկայացված հատուկ վերանայման բողոքն անհրաժեշտ է թողնել առանց քննության (...)»*[2]*:*

<u>Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սեփականության իրավունքի սահմանափակումը վերացնելու միջնորդության կապակությամբ վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր, ուստի, անհրաժեշտ է համարում սույն վարույթով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

8. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Վերաքննիչ դատարանի եզրահանգումն առ այն, որ սեփականության իրավունքի սահմանափակումը վերացնելու միջնորդության կապակցությամբ վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումը ենթակա չէ հատուկ վերանայման:

9. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

10. Արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

---

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 118-121:

- դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով[3],

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը[4],

- դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն[5],

- ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա[6]: Դատական մատչելիության իրավունքը խախտվում է, երբ սահմանված կարգավորումները դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակներին և վերածվում են իրավասու դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու խոչընդոտի[7]:

11. Արդար դատաքննության իրավունքի համատեքստում կարևորելով դատարանի մատչելիության իրավունքը՝ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ դատական մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում՝ ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է **ձևական բնույթ կրեն**, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում

---

[3]Տե՛ս *Luordo v. Italy* գործով 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32190/96, 85-րդ կետ, *Staroszczyk v. Poland* գործով 2007 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 59519/00, 124-րդ կետ, *Stanev v. Bulgaria* գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, 230-րդ կետ:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5]Տե՛ս *Khalfaoui v. France* գործով 1999 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 34791/97, 36-րդ կետ, *Hirschhorn v. Romania* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, 50-րդ կետ:

[6]Տե՛ս *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[7]Տե՛ս *Efstathiou and others v. Greece* գործով 2006 թվականի հուլիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 36998/02, 24-րդ կետ:

կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները[8]:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 389-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման ենթակա են առաջին ատյանի դատարանի հետևյալ դատական ակտերը.

(. . .)

3) սույն օրենսգրքի 285-րդ, 292-րդ, 295-րդ կամ 302-րդ հոդվածներով նախատեսված՝ դատական երաշխիքների որևէ վարույթի հարուցումը մերժելու, ինչպես նաև ցուցմունքի դեպոնացման միջնորդությունը մերժելու մասին

(. . .)

13) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ դատական ակտեր»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 298-րդ հոդվածի համաձայն՝

«1. Արգելադրված գույքի սեփականատերը, դրա նկատմամբ գույքային շահ ունեցող այլ անձը կամ նրանց ներկայացուցիչը իրավունք ունեն մինչդատական վարույթի ընթացքում միջնորդություն ներկայացնելու դատարան գույքի արգելադրումը վերացնելու մասին ոչ շուտ, քան գույքի արգելադրումից երեք ամիս հետո: Միջնորդության պատճենն ուղարկվում է մինչդատական վարույթն իրականացնող քննիչին և հսկող դատախազին:

2. Դատարանը մերժում է միջնորդության հիման վրա վարույթի հարուցումը, եթե միջնորդությունը ներկայացվել է ոչ պատշաճ անձի կողմից կամ ոչ պատշաճ ժամկետում, կամ եթե դրանում չեն ներկայացվել գույքի արգելադրման իրավաչափությունը վիճարկող նոր էական փաստարկներ (. . .) »:

12.1. Վերոգրյալ իրավական կարգավորումների համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սեփականության իրավունքի սահմանափակումը վերացնելու միջնորդության քննության համար օրենսդիրը նախատեսել է երեք պայմանների միաժամանակյա առկայություն, այն է՝

ա) միջնորդությունը պետք է ներկայացվի արգելադրված գույքի սեփականատիրոջ, դրա նկատմամբ գույքային շահ ունեցող այլ անձի կամ նրանց ներկայացուցչի կողմից,

բ) միջնորդությունը պետք է ներկայացվի մինչդատական վարույթում և ոչ շուտ, քան գույքի արգելադրումից երեք ամիս անց:

գ) միջնորդությունը պետք է պարունակի գույքի արգելադրումը վիճարկող նոր էական փաստարկներ:

Վերոնշյալ պայմաններից մեկի բացակայությունը ինքնին հանգեցնում է սեփականության իրավունքի սահմանափակման վերացման վերաբերյալ միջնորդության կապակցությամբ վարույթի հարուցման մերժման: Այսինքն, օրենսդիրը

---

[8]Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արթուր Այվազյանի* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴ2/0007/15/12 որոշումը, 16-րդ կետ, *Լևոն Հարությունյանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0337/06/15 որոշումը, 13-րդ կետ:

հստակ սահմանել է սեփականության իրավունքի սահմանափակումը վերացնելու միջնորդության կապակցությամբ վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելու պայմանները, մինչդեռ նշված որոշման բողոքարկման հնարավորություն չի նախատեսվել: Այդուհանդերձ, դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի և վարույթի ընթացքում գույքի արգելադրման պարտադիր դատական սանկցիավորման առարկա հանդիսանալու կանոնի համակցված վերլուծությունից անմիջականորեն հետևում է, որ սեփականության իրավունքի սահմանափակման վերացման վերաբերյալ միջնորդության կապակցությամբ վարույթ չհարուցելու մասին որոշմամբ անմիջականորեն շոշափվում են դրանցով պաշտպանվող շահերը, հետևաբար շահագրգիռ անձը պետք է հնարավորություն ունենա վիճարկել այն:

12.2. Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ նույն ընթացակարգի շրջանակներում կայացվող գույքի արգելադրման մասին քննիչի որոշման իրավաչափությունը հաստատելու վարույթի հարուցումը մերժելու մասին դատարանի որոշումը ներառված է վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման ենթակա դատական ակտերի ցանկում, իսկ սեփականության իրավունքի սահմանափակման դատական երաշխիքների վարույթում կողմերի հավասարության ու մրցակցության սկզբունքից շեղումն անթույլատրելի է, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սեփականության իրավունքի սահմանափակումը վերացնելու միջնորդության կապակցությամբ վարույթի հարուցումը մերժելու մասին որոշմամբ շահագրգիռ անձի իրավունքների հնարավոր խախտման փաստը պարզելու միակ տարբերակը վերադաս դատարանի կողմից վերոնշյալ որոշման դատական ստուգումն է՝ համապատասխան բողոքի հիման վրա, որը պետք է ներկայացվի և քննվի հատուկ վերանայման կարգով:

Այլ խոսքով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սեփականության իրավունքի սահմանափակումը վերացնելու միջնորդության կապակցությամբ վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման՝ հատուկ վերանայման ենթակա դատական ակտերի ցանկում նախատեսված չլինելու հիմքով անձի՝ դատական պաշտպանության իրավունքի սահմանափակումն իրավակիրառ պրակտիկայում չպետք է այն աստիճան ձևականացվի *(excessive formalism)*, որ անձը՝ սեփականության իրավունքի նկատմամբ տեղի ունեցած միջամտության պայմաններում, զրկվի դատարանի որոշման իրավաչափությունը ստուգման ենթարկելու հնարավորությունից:

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանի 2024 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ սեփականության իրավունքի սահմանափակումը վերացնելու վերաբերյալ [redacted] ներկայացուցիչ [redacted] կողմից ներկայացված միջնորդության կապակցությամբ վարույթի հարուցումը մերժվել է[9],

- [redacted] ներկայացուցիչ [redacted] հատուկ վերանայման բողոք է ներկայացրել Առաջին ատյանի դատարանի՝ սեփականության իրավունքի սահմանափակումը վերացնելու միջնորդության կապակցությամբ վարույթի հարուցումը

[9] Տե՛ս սույն որոշման 6-ին կետը:

մերժելու մասին որոշման դեմ, որը Վերաքննիչ դատարանի 2024 թվականի մայիսի 10-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ դատական ակտը հատուկ վերանայման ենթակա դատական ակտերի ցանկում նախատեսված չլինելու հիմքով[10]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-12.2.-րդ կետերում շարադրված նորմերի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, բացառելով Առաջին ատյանի դատարանի որոշումը [redacted] ներկայացուցիչ [redacted] կողմից հատուկ վերանայման կարգով բողոքարկելու հնարավորությունը՝ սահմանափակ մեկնաբանման է ենթարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 389-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները, ինչպես նաև հաշվի չի առել այն հանգամանքը, որ սեփականության իրավունքի սահմանափակման վերացման միջնորդության կապակցությամբ վարույթի հարուցման մերժման որոշմամբ անմիջականորեն շոշափվում են անձի՝ դատական պաշտպանության իրավունքը, որի պայմաններում [redacted] իրավունքների հնարավոր խախտման փաստը պարզելու միակ տարբերակը հանդիսանում է վերադաս դատարանի կողմից վերոնշյալ որոշման դատական ստուգումը:

Այսպիսով, վերոգրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ Առաջին ատյանի դատարանի 2023 թվականի ապրիլի 8-ի որոշումը բողոքարկման ենթակա չէ, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 389-րդ հոդվածով այն նախատեսված չէ: Հետևաբար, սեփականության իրավունքի սահմանափակումը վերացնելու միջնորդության կապակցությամբ վարույթի հարուցումը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ [redacted] ներկայացուցիչ [redacted] հատուկ վերանայման բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի եզրահանգումը հիմնավոր չէ:

15. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, [redacted] ներկայացուցիչ [redacted] հատուկ վերանայման բողոքն առանց քննության թողնելով, անհամաչափորեն սահմանափակել է [redacted]՝ դատարանի մատչելիության իրավունքը, սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 389-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները, որը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 23-րդ հոդվածների խախտման, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի 2024 թվականի մայիսի 10-ի որոշումը բեկանելու և վարույթը նույն դատարան՝ նոր քննության փոխանցելու համար[11]:

---

[10] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

[11] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Հրայր Հովսեփյանի* գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 և *Ավաթ Ամինի* գործով 2023 թվականի հունվարի 25-ի թիվ ԵԴ/0752/06/22 որոշումները:

16. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, պետք է քննարկման առարկա դարձնի [redacted] ներկայացուցիչ [redacted] կողմից բերված հատուկ վերանայման բողոքը վարույթ ընդունելու հարցը և արդյունքում հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ 361-րդ, 363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ՀԿԴ/0044/15/24 դատական վարույթով [redacted] ներկայացուցիչ [redacted] հատուկ վերանայման բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի մայիսի 10-ի որոշումը բեկանել և վարույթը փոխանցել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ _____ Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆ

_____ Ս.ՉԻՉՈՅԱՆ

_____ Դ.ՎԵՔԻԼՅԱՆ